

ՔԵՐԻԵՐԵԱՆ, Ռուբէն. — Հայերէն նորագոյն քանաստեղծները. մասն 1. Բանասրեղծ-միաժող. (Կրիտիկական անալիզ) Տպագրակ. և հրատարակչ. ակցիոներակ. ընկերութիւն Ռուբով Դոնի վրայ.

1898թ. 44էջ. դինը 20 կոպէկ:

Կան գրքեր, որոնց մասին գրելը բաւական ծանր գործ է. և այդ ոչ թէ նրա համար, որ այնորեղ արծարծած մոքեցն ու խնդիրները բարձր են ձեր հասկանալու կարողութիւնից կամ անծանօթ են ձեզ ալ որովհետեւ գրաւծքն ալնպիսի ծղողւած չորի է նման, որ չդիտէք որ ծարից բռնէք, որ չքրքրւի. Սուր ու սխալ մոքեր, անորոշ ու անրովանդակ խօսքեր, պաշարի ու մեթոդի պակասութիւն իրար խառնւած՝ զժւարացնում են նրանց խըմբելն ու կարգի բերելը, ուրիմն և նրանց պատկերը դալը:

Ալսպիսի գիրք է այ. Բերբերեանի ակրիտիկական անալիզը» Մանրամասն ամբողջ գրքի մասին խօսելը չարժէ. կ'աշխարհնք առաջին երեսից զորս բերել այդ նոր գրողի մոածութեան լավկութիւններն ու ունեցած գրական պաշարի չափը, թողնելով ընթերցողին դադելու թէ ինչ կը լինի այդ հարստութիւնն ունեցող մարդու արրագրածը:

«Դեռ իր վերջին երգը չէր երգած հայոց աղջակին բանասրեղծ Գամառ-Քաթիպան, երբ ութսունական թւականների սկզբից մինչեւ իննոնականի սկիզբները, այսինքն մօտ 8—10 ուարւաէ ընթացքում երեցան հայոց գրականական ասպարիգում մինը միւսի եղանից չորս հայ

բանասրեղծ՝ Յ. Յովհաննիսեան, Լեռնեց, Յովհաննէս թումանեան և Յ. Ծագուրեան» (էջ, 5):

Ժամանակագրական սխալ, երբ ասում են ալս ինչ թւականների սկզբում, օրինակ՝ ութսունական թթ. սկզբում, հասկանում են մի դասնամեակի առաջին հինգ դարին ամենաշատը. մեր օրինակով՝ 80—85. 85—90-ն արդէն ութսունական թւականների վերջն է. Արդ ինչպէս կարող է երեան դալ այդ պահասպանզներից» մէկն ու մէկը 80-ական թւականների սկզբում, երբ ընդհանուր բանասրեղծական լուսաթիւնը պարուղ Յ. Յովհաննիսեանը իր գրքովկը հրատարակել է 87թ., լեռնեցն ու թումանեանը 90-ին, իսկ Ծագուրեանը 91-ին. Ալդպիսի սխալ խօսք ասելու դեղ, նա կարող էր մէկ նախել նրանց գրքովիների լոյս դեմելու թւականին, որ նրա առաջն էին անշուշտ:

Ուրիշ սխալ. այդ թւականներին չորս բանասրեղծ չեն երեացել միան. 89-ին է երեացել նաև Լ. Մանէւեան, որը առանձին գիրք չունի դպած, բայց որն ալնու ամենալավ երեացել է, Ալդպէս նաև Շանթը, Աւետիք իսահակեանը, Գ. Դեմիրճեանը, որոնք երեացել են իննոնական թւականների սկզբում. Մի գիծ էլ. «հայոց գրականական

ասպարիզում երեցան... չորս հայ բանաստեղծ»։ կարծէք ալդ ասպարիզում կարող էին թուրք ու ռուս բանաստեղծներ երևալ։ այս նշանակում է բառեր գործ ածել, առանց կարեռութիւն տալու նրանց։

Հարունակութիւն, «Սա մի բնուրոշ և հետաքրքրիր (ական) երեսով է, որ մի փոքրիկ ժամանակամիջոցում դուքս եկան չորս՝ զանազան գոյնի և ուժի բանաստեղծները, այս երեսովի պատճառները որոնելու է ութունական թւականների հարց կեանքի պատճաններում» (էջ 5)։

Լուած ու աքսիոմափ ուժ է սրացած այն միտքը թէ՝ չկաէ երեսով առանց պատճառի, և որ գրական երեսովները դուքս չեն ազդ ընդհանուր շրջանակից, և պ. Բերքերեանը կրկնում է ազդ աքսիոման, կարծելով թէ բան է բացադրում կամ մի կարեռը միտք է չափնում։ Ազդ ով չզիտէ, որ եթէ մի երեսով կազ նշանակում է պատճաններ ու պատճառներ կան, որ կամ Բաց բանն աչպեղ ազդ վկաչելը չէ. այդ հեշտ է, բանն աչսդէպում այն է, որ ազդ անբովանդակ առթունական թւականների կեանքի պատճաններ» խօսքում որոշ բովանդակութիւն դնւէր, բանն այն է, որ հեղինակը ցուց տար՝ թէ որոնք են ազդ պատճանները, ինչ բնաւորութիւն ունին, ինչպէս են իրար վրաէ ազդել ու խմբւել, որ իբր հետքանք գուել են «չորս զանազան գոյնի և ուժի բանաստեղծներո», ալախնքն ան, ինչ ամենից հետաքրքրականն, ուսանելին ու դժւարն է... Սա էլ նշանակում է խօսքեր ասել, առանց բովանդակութեան».

Եւ ապա, «Մինչդեռ ահա 7—8 տարի է, որ չենք կարող մի ալ նոր բանաստեղծի վրաէ մատրնանիշ անելը (էջ, 5)։ Մենք դեսանք, որ ոչ միայն ալը», ալլ և մի քանի բանաստեղծներ են երևացել, չիմա էլ դեսնում ենք, որ նրանք պ. Բերքերեանի աշքում նոյն է թէ իսկի չեն երևացել. այս էլ երեսի նրա համար, որ հեղինակը նրանց իր դէմը առանձին գրքերով չի դեմում կանգնած։ Դասեր չենք ուզում տալ բաց մի քննադար պիտի անշուշր ամենաքչը իմանալ թէ ինչ է եկել ու անցել մեր գրականութեան գլխով իր ակնարկած թւականներում, հասարակի իրողութիւնների մոքով։ Այս արդէն ժամանակագրական սխալ չէ միայն, ալլ անգիտութիւն մեր գրականութեան ամենաթարմ անցեալի. պ. Բերքերեանը չիմանալուց աչքաթող է անում ամենաակնչալունի իրողութիւններ, Սա ցուց է տալիս թէ որքան է ծանօթ ակրիտիկական անալիզ-ի հեղինակը մեր գրականութեան հետ... Ել չեմ ասում, որ գոնէ հասարակական անդարբերութեան այս ծանր օրերում, գրչակիցներն իրար չպիտի մոռանան, գրական ուժերի երեան գալն ու արածը պիտի չուրանան...»

Ցերու՝ «Այս չորս բանաստեղծներն էլ մի չափնի հաչեցակէտից նախած՝ միենոյն ներքին ոգին են կրում, նրանց բոլորի մօտ էլ միենոյն մոդիւնները դեմում ենք, և աչդ մոդիւնները ազգաէին ոգի են կրում, ոմանց մօտ ըմբռադ ու ժանրալից, ոմանց (՛) դիմուր ու ուսմանտիկ ձեռով արդարաւած» (էջ, 5)։

Հէնց օրինակ ալս մի քանի տողը. մարդ չի իմանում որ ծագրից բռնի. «Ումանց մօր ըմբռուր ու ժահրալից...» բացի Լեռենցից, միւս երեքը ոչ ըմբռուր են, ոչ էլ ժահրալից, ինչպէս լայտնի է ամենքին. եթէ ավապէս է, եթէ միայն Լեռենցն է դուրս գալիս «ըմբռուր ու ժահրալից», այն ժամանակ ինչպէս թէ՝ «ումանց մօր ըմբռուր ու ժահրալից».. «Միենցն ներքին ոգին են կրում». մենք «արդաքին ոգի» իսկի չնք էլ հասկանում. հեղինակն ինքն էլ հազիւթ թէ հասկանալիս լինի, որովհետեւ ոգին ի հարկէ ներքին բան է, Եւ լիբոր և լիմնուն ոգին են կրում. եթէ ագրպէս լինէր, վաճն եկել էր նրանց տարել. էլ ինչ ինքնուրունութիւն կը մնար իրար համեմարութեամբ. մէկը միւսի վկոպիան» կը լինէր...

«Նրանց բոլորի մօր էլ միենուն մոտիւները տեսնում ենք, և ալդ մոտիւները ազգագին ոգի են կրում». ավապէս են երևում ար Բերբերեանին ալդ բանաստեղծները «մի լալոնի հակեցակէտից». ալս հակեցակէտը առաջմմ մնաք Դուրս է գալիս ուրեմն, որ ալդ չորս բանաստեղծներն էլ «ազգագին ոգի կրող մոտիւներ» ունին. Գամառ-Քաթիպան ունի, ալս. Ծարութեանի երկերում պարահում են. բայց Յովի. Թուրմանեանն ու Յ. Յովիաննիսեանը ալդ՝ մեղքն ասեմ թէ վարձքը՝ չունին բնաւ, ինչպէս ընթերցող հասարակութիւնն արդէն նկառել է և քննադարութիւնն էլ անուղղակի ցոչ է ուել. Ալս երկուսը չին կարող մի ընդհանուր լաւարարի բերւել Լեռենցի հետ, որ

իսկի բանաստեղծ էլ չէ.

Բացի ալդ, բանից դուրս է դալիս, որ Լեռենցից զառ, միւս երեքը ոչ միայն «ազգագին ոգի կրող մոտիւներ» ունին, ալլ և որ ալդ մոտիւները «ուումանտիկ ձեռով են արտակրոած»: «Մորիւներից առակը ասինք որ սիալ է երկուսի վերաբերմամբ. «ուումանտիկ ձեռ» արդէն սխալ է երեքի վերաբերմամբ էլ, եթէ միանք պ. Բերբերեանը «ուումանտիկ» ասելով այն է հասկանում, ինչ հասկանում են ու պիորի հասկանալ: Ռումանադիզմը (թէ էութեամբ և թէ ձեռվ), ինչպէս որ բեկել է ռուս բանաստեղծութեան պլրկմալում, մեր ալդ բանաստեղծների վրաւ չի ազդել իսկ եւրոպական ռումանադիզմը բանաստեղծութեան վրաւ ընդհանրապէս ամեն ուեղ էլ ազդել է, այնպէս որ չորսի մասին խօսելիս այս գէմքում «ումանց»-«ումանց» ասելը միտք չունի:

Հիմա՝ «հակեցակէտը», Ալդ ինչ այստեղի հակեցակէտ» է, մեզ լավո՞նի չէ. հեղինակը «կազմոնի» ասել ու անցել է, կարծելով թէ իսկապէս լակոնից իր տեսակէտը. գրքովկը որ մաղեք՝ ոչինչ չէք իմանաւ: Ալդ լավո՞նի-անգամ տեսակէտը այնքան էլ որոշ չէ նորն իսկ հեղինակի համար. թէ չէ, որ որոշ լինէր՝ միթէ կարելի էր ալդ տեսակէտից նաևկով «ազգագին ոգի» կրող մոտիւներ տեսնել անտեղ, ուր իսկի չկամ. Ալ էլ նշանակում է թէ հեղինակը խօսքեր է ասում, առանց լաւ լսելու իր ասածի...

Նարունակութիւն և վերջ. «Ապական մի ալդ տեսակէտից, նրանցից

մի քանիսը առանձին դեղ են բըռ-
նում իրանց հասկացողութիւններով
և նրանց արտապայտելու միջոցով և
շատ գէպքերում արմատօրէն զանա-
զանում են իրանց ընկերներից, միւս
բանաստեղծներից (էջ 6). Երբ ասում
են «մի քանիսը», ոչ մէկ են հասկա-
նում, ոչ երկու, ալ առնւազն՝ երեք.
արդ թնջպէս են մի քանիսը «զա-
նազանում իրանց ընկերներից», երբ
ալդ «ընկերները» ալս գէպքում մի
մարդ միան կարող է լինել... Յե-
տոց թնչ է կարծում պ, թերքերեա-
նը «հասկացողութիւնները» ներքին
ոգուն» չեն վերաբերում. կարծում
ենք որ՝ այս թնջպէս էին ուրեմն
նրանք մի տեսակէտից մնոյն ներ-
քին ոգին» կրում, իսկ ալժմ «իրանց
հասկացողութիւններով առանձին
դեղ են բանում» և «արմատօրէն
զանազանում» «մի ալ տեսակէ-
տից»... Բացի ալս, ալդ բառե-
րը, որ շարւած են իրար մօտ և
կարծէք թէ որոշ միուք են արտա-
լայտում, իսկապէս շատ անորոշ են,
առանձին դեղ են բանում իրանց
հասկացողութիւններով ...», այս, բըռ-
նում են. բայց թնչ բանի վերաբեր-
մամբ. իշխող աշխարհականացքի, մեր
մոքի զարգացման, մեր բանաստեղծ-
նութեան եղած ուղղութեան, հասա-
րակական կեանքի, թէ մի ալ բանի.
թէ չէ ով չգիտէ, որ ոչ միան ամեն
գրող, ալ և ամեն սոսի մարդ ու
առարկաէ «ի՞ր առանձին դեղն է
բանում»... Ալդ «մի ալ տեսակէտն»
էլ, որ առաջ «հակեցակէտ» էր, թող
լայտնի լինի, որ նոյնքան որոշ է,
որքան և առաջինը. Ալս էլ նշանա-
կում է կանոնաւոր ու որոշ չմրա-

ծել...

Մենք վերջացրինք գրքովի ընդ-
հանուր մասի վերլուծութիւնը, որ
ընդամենը մի էջ է, ինչպէս դես-
նում էք, ալդ մի էջում ոչ մի ուղիղ
միուք չկատ արտապայտած, ոչ մի ան-
կասկածելի իրողութիւն չկալվկալած.
Ալս ամենից երեսում է, որ պ. թեր-
քերեանը ծանօթ չէ մեր նորագոյն
գրականութեան ամենահասարակ ի-
րողութիւններին. ալս՝ նրա ունեցած
գրական պաշարի մասին. Նա չգիտէ
որրամբանօրէն, կարգին մրածել
գոնէ ուսնելի չափով. մրածելու ամեն
գրալում սխալներ է անում, անբովան-
դակ խօսքեր է ասում, անդեղի բա-
ռեր գործ ածում, առանց մի լաւ նաև-
լու իր ասածի վրաւ Ցուց է Փալիս
թէ «գալունի տեսակէտներ ունի»,
մինչդեռ բանից երեսում է, որ ալդ
տեսակէտ ասած բաները ոչ լս լրնի
են, ոչ էլ տեսակէտներ են...».

Մենք ծանօթացանք պ, թերքե-
րեանի «անալիվի» գոների հետ. եռ
գոնէ ալ ևս չեմ ուզում գոները բա-
նալ ու ներս մընել. և այս թէ թն-
չու Գեղարւեստական գրականու-
թիւնը քննադապողը պիտի հասկա-
նաէ թէ թնչ է նշանակում բանա-
ստեղծութիւն, գեղարւանու. Պ. թեր-
քերեանը Լեռենցին մեր բանաստեղծ-
ների շարքումն է զնում. նշանա-
կում է նրան բանաստեղծ է համա-
րում. ուրիշներն էլ պնդեցին, որ
Նա բանաստեղծ չէ. մենք լիովին հա-
մաձան ենք. ուրեմն... ուրեմն պ.
թերքերեանը չի կարողանում լան-
գաւոր (այն էլ շատ ողորմելի լանդ
ու չափով) տողերը զանազանել իս-
կական բանաստեղծութիւնից. «Ալրի-

որիկական անալիզը», որպէս «բանաստեղծի» երկերի անալիզ, լեռնեցի բանաստեղծ չեղեղը, կորցնում է իր հիմքը և շնչքը փլում է. դուռն է մնում միայն, ան էլ դիսանք...»

Այնուամենալիւ մի քանի խօսք էլ աւս անգամ վերջին կէտի՝ պ. Քերերերեանի բանաստեղծութիւն հասկանալու մասին: «Նա (Լեռնեցը), ասում է «անալիզ» հեղինակը, խորհում է և ահա աշխարհում է իր խորհածը, մրածածքը ապացուցանիլ մէջ քերելով օրինակ, էւոլիցիալի օրէնքը...» (Եջ, 80): (Կարծէք խօսքը չօղածագրի մասին լինի): Եւ վերոք սկսելով իր «անալիզը» ընթերցողներին ամի փոքրիկ (լ) դաշտափար դալու համար» Լեռնեցի մասին, մէջ է քերում նրա օլիախն մի զիշերա որանաւորից մի կոր ու ասում: «Ելսորեղ բանաստեղծ-փիլիսոփիան ուղղակի մեղ տալիս է գեղեցիկ ոճով և բանաստեղծուն գրած Դարւինի չայրնի թէօրիան ու մարդկաւին զարգացումը, բառաշացումը, էւոլիցիան»:

Ալդ որանաւորն ալսպէս է սկըսում:

Եւ դնե, խեղճ էակ, վրիտ,
բայց և բարձր,
Մարդ,—անիշելի ժամանակ-
ներից

Առաջացել ես դու էակներից,
Որ քո լանդիման աչժմ շատ են
ցածր.

Անհուն դարերի ընթացքում
խաւար,
Անհուն ձիգերի, տոկումութեան
գնով,

Ալսօր դարձել ես ուէր նրանց
համար (լ)
Ալսօր զսպում ես նրանց հզօր
կամքով:

Եւ ալլն: Եւ սա է կոչում «բանաստեղծուքն գրած և գեղեցիկ ոճով».. Պ. Քերերերեանը առաջ ես հկել դու էակներից» խօսքը կամացաբար հասկանում է «Դարւինի թէօրիա», իսկ էակներու բառը նոյնպէս կամաչարաբ՝ «ամենատարրական կազմւածք—պրոբոպլազմա». ու աւս վերջին զէպքում իր «բանաստեղծմրածողին» (այս անգամ արդէն ակամակ) դու ըս է թերում ոչ-մրածող, որովհետու բանից երեսում է թէ մարդը ալսօր զսպում է ամենատարրական կազմւածք — պրոբոպլազմաին! (Ի զէպ, պրոբոպլազման, որքան զիտենք, ամենատարրական կազմւածքը չէ, այլ այդ կազմւածքի մի մասն է)...

Եւ վերջապէս ինչ է նշանակում որ և է թէօրէ բանաստեղծութեան նիւթ վերցնելն՝ ինքն ըստ ինքեան, երբ հին զարի բանաստեղծն է ալդ-պիտի միտք լավոնում իր պարզաբես հանճարի ուժով կամ հին փիլիսոփան իր մրգի թռիչքով, այդ զարմանքի ու հիացմունքի արժանի է. բայց գալ ու զիտական թէօրէն, որ իր զիտական արդաբարութիւնն ունի, իւրացնելուբանաստեղծութեան նիւթ առնելու... այդ արդէն՝ թէկ նոյնպէս զարմանքի արժանի է, բայց մի ալդ կողմից... Բանը որ թէօրէն բանաստեղծուքն գրելուն եկաւ ահա ձեզ. Ծեր «ժամանակի» մանուշի հասկում չակակ կրակէ զանդւած էր լուգում

Ու հուր արգանդից ծնած որդե
կերանց
Տարածութեան մէջ մէկ-մէկ շը-
պըլորում:
Կայտառ փոքրերը մօր շուրջը
խմբւած:
Պորուսում էին խելառ, թափ
առած:
Կլոր-պար բունած թռչում ու
վազում,
Բոցոր ու շեշտոր նւագներ հիւ-
սած:
Ու կամաց-կամաց չողնած պա-
րելուց,
Ուժերը հագուած արագ վազե-
լուց՝
Նրանք ծերացան, սրգները
սառաւ,
Զայները մարեց թափով եր-
գելուց:
Զահիլ երկիրն էլ որդիք ու-
նեցաւ:
Հանքեր ու բուսեր, կենդանիք
անրաւ:
Սիրով նակում է իր փոքրիկ-
ներին
Հպարտ ցուց ուալիս քոյրեղ-
բալրներին,
Ու ամեն անդամ ուատը ան-
կողնից

Երբ վաղ զարթնում է, դեռ
պարկած ուեղից՝
Ժպոտով շողում է մասուդ թռո-
ներին,
Զերմագին գգւում պառաւած
կրծքին ¹⁾:
Ահա ձեզ—Քանո՞ւ-Լապլասի թէօ-
րէն և ոյնեղերական էւոլիւցիան.
աւստեղ թէ բանասրեղծական պար-
կերներ կան, թէ լեզուն է թեթև ու
սահուն, թէ լանգերն են իրար լաւ
բռնում և թէ առաջին երեք քառա-
շարների ձևը, որքան գիրենք, նո-
րութիւն է մեր զրականութեան հա-
մար... Ահա թէ ինչպէս է հասկա-
նում «անալիզի նեղինակը» բանա-
սրեղծութիւնը:
Սակայն հաշւապահների պէս «ընդ-
ամենը» խփենք. պ. Բերբերանը
բոլորովին անպատճառ ու անձե-
ռնհաս է մեր «նորագոյն բանա-
սրեղծներին» քննադադելու, թէ որ-
պէս գրող և թէ որպէս զրական ճա-
շակի ու պաշտրի տէր մարդ:

Ն. Աղբալեանց

¹⁾) Այս որանաւորը մենք գրեցինք
կէս ժամում, ցուց ուալու համար, որ
անգերով գրելը դժւար բան չէ. թող-
ներողամիտ լինին ընթերցողները, որ
պարանի օրերը միտներս ենք բերել.